

ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԵՐԱԺՇՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՏԻԳՐԱՆ ՉՈՒԿԱԾՅԱՆԸ «ԲԱԶՄԱՎԷՊ» ՀԱՆԴԵՍԻ ԷԶԵՐՈՒՄ*

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ*

Հայկական պարբերական մամուլում հայ երաժշտության դասական, հայ երաժշտական թատրոնի հիմնադիր, հանճարեղ կոմպոզիտոր, շնորհաշատ դաշնակահար, տաղանդավոր դիրիժոր, վաստակաշատ մանկավարժ, եռանդուն երաժշտական-հասարակական գործիչ Տիգրան Չուխաճյանի (1837-1898) կյանքին ու գործունեությանը նվիրված առաջին հրապարակումներն ի հայտ են եկել դեռևս 1870-ական թվականներին՝ իր կյանքի օրոք: Զարմանալիորեն Վենետիկի Մխիթարյան միաբանության պաշտոնական օրգանը՝ «Բազմավէպը», Տ.Չուխաճյանի կյանքին ու գործունեությանն անդրադարձավ նրա մահից հետո միայն: 1899-ի փետրվարյան համարում տպագրվում է կոմպոզիտորի մահախոսականը՝ «Բազմավէպ»-ի խմբագիր Սիմոն Երեմյանի «Հայ Վերտին» հոդվածը: 10 տարի անց՝ 1909թ. մարտի համարում լույս է տեսնում «Բազմավէպ»-ի խմբագիր Ներսես Տիրացույանի «Հայ Վերտին (Տիգրան Չուխաճյան)» հոդվածը, որը հայերեն թարգմանությամբ ներկայացնում էր Բոլոնիայի թերթերից մեկի՝ 1909-ի փետրվարի 21-ի համարում հրապարակված՝ իտալացի կոմս Riccardo della Torre-ի «Il Verdi Armeno» հոդվածը:

Քանալի բառեր – Տիգրան Չուխաճյան, «Բազմավէպ», «Հայ Վերտին», Սիմոն Երեմյան, «Հայ Վերտին (Տիգրան Չուխաճյան)», Ներսես Տիրացույան, “Il Verdi Armeno”, իտալացի կոմս Riccardo della Torre:

Հայկական պարբերական մամուլում հայ երաժշտության դասական, հայ երաժշտական թատրոնի հիմնադիր, հանճարեղ կոմպոզիտոր, շնորհաշատ դաշնակահար, տաղանդավոր դիրիժոր, վաստակաշատ մանկավարժ, եռանդուն երաժշտական-հասարակական գործիչ Տիգրան Չուխաճյանի (1837-1898) կյանքին ու գործունեությանը նվիրված առաջին հրապարակումներն ի հայտ են եկել դեռևս 1870-ական թվականներին. Երուսաղեմում հրատարակվող «Սիոն»-ի՝ 1871թ. 9-րդ համարի «Բանասիրական» բաժնում (էջ 196-198) տպագրվել է Ա.Այվազյանի «Արշակ Բ» նվագերգությունը-երաժշտություն Չուխաճյանի» հոդվածը:

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի կողմից անցկացված մրցույթի արդյունքում ֆինանսավորվող «18T-6E108» ծածկագրով «Կերպարվեստի և երաժշտության հարցերը XIX դարի և XX դարասկզբի հայկական մամուլի էջերում» գիտական ծրագրի շրջանակներում:

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, Երաժշտության բաժնի վարիչ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, instart@sci.am, հոդվածի ընդունման օրը՝ 05.02.2019, գրախոսման օրը՝ 14.03.2019:

Այնուհետև կոմպոզիտորի կյանքի օրոք նրա մասին հոդվածներ են տպագրվել Թիֆլիսի («Մեղու Հայաստանի», «Արծազանք», «Մշակ», «Նոր դար», «Տարազ»), Կ.Պոլսի («Արևելք», «Հայրենիք», «Մասիս»), Զմյուռնիայի («Արևելյան մամուլ») և Վիեննայի («Հանդես ամսօրյա») պարբերականներում:

Տ.Չուխաճյանի կյանքին ու ստեղծագործությանն անդրադարձած հայկական պարբերականների ցանկում, ինչպես տեսնում ենք, զարմանալիորեն բացակայում է «Բազմավեպը»: Եվ դա այն դեպքում, որ Չուխաճյանը կաթոլիկ հայ էր: Դրա մասին է իր հուշերում վկայում հայ ականավոր լեզվաբան և բառարանագիր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Հրաչյա Աճառյանը. «... Այս երգին եղանակ հարմարեցրեց նշանավոր երաժշտագետ Տիգրան Չուխաճյանը, որ ամբողջ Կոստանդնուպոլիսը լցրել էր իր «Լեպլեպիճի Հորհոր» օպերայի աղմուկով: Դպրոցի ամֆիթատրոնում ամբողջ աշակերտներս հավաքվեցինք, և Չուխաճյանը, մեզ խմբերի վերածելով, սովորեցրեց քառաձայն երգը: Ես սուպրանոների մեջ էի. մինչև այժմ հիշում եմ Չուխաճյանին, որ հայ կաթոլիկ լինելով *Դ*-ի տեղ *Ղ* էր արտասանում և երեք խմբերին դիմելով կոչում էր՝ «Պատղա՛ստ, պատղա՛ստ, պատղա՛ստ»¹:

Եվ այսպես, 1898 թվական, 10-ը մարտի: Զմյուռնիայում ծանր տառապանքներից հետո դեմքի քաղցկեղից 61 տարեկանում կյանքից հեռանում է Տիգրան Չուխաճյանը:

Կոմպոզիտորի անժամանակ մահվանն արձագանքում են թիֆլիսյան «Տարազը», «Մշակը», «Նոր դարը», Զմյուռնիայի «Արևելյան մամուլը»...

Տ.Չուխաճյանի մահվան գույժին արձագանքում է նաև «Բազմավեպը». 1899-ի փետրվարյան համարի «Նշանաւոր հանգուցեալք» բաժնում տպագրվում են «Բազմավեպ»-ի խմբագիր, բնագետ, գրող, բանասեր Սիմոն Երեմյանի² (հոկտեմբերի 30, 1871, Տրապիզոն - 1936, Միլան) «Հայ Վերտին»

¹ Աճառյան Հ., Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 83:

² Ս.Երեմյանն ուսանել է ծննդավայրում, ապա Վենետիկի Մխիթարյանների մոտ, 1895-ին դարձել է միաբանության անդամ: 1899-1905թթ. խմբագրել է «Բազմավեպ»-ը, 1901-ից՝ նաև «Գեղունի» հանդեսը: 1896-ին Վենետիկում նա հրատարակել է «Նոր կենդանաբանություն և մարդաբանություն պատմական և նկարագրական», 1898-ին՝ «Տարվինականություն կամ տեսակաց և մարդու ծագման խնդիրը», 1901-ին՝ «Հայ բժշկարանք» աշխատությունները, ինչպես նաև «Պատկերազարդ բառգիրք գործնական գիտությանց» (1900) աշխատություն-հանրագիտարանը: Հեղինակել է գեղարվեստական ստեղծագործություններ՝ «Տուրկին» (1903), «Տագնապը» (1904) վիպակները, «Անեծք» (1903), «Սաթենիկ» (1904), «Ուխտը» (1905) ողբերգությունները, արձակ բանաստեղծություններ, հուշեր, ինչպես նաև գրականագիտական ուսումնասիրություններ՝ «Կենսագրություն Ղևոնդ Ալիշանի» (1902), «Գրական պատմություն և գեղեցիկը» (1915), «Գրագետ հայեր» 10-հատորանոց աշխատությունը (1913-1933), որտեղ տրված են հայ մշակութային գործիչներ Ղևոնդ Ալիշանի, Ղազարոս Աղայանի, Մատթեոս Մամուրյանի, Հակոբ Պարոնյանի, Տիգրան Կամսարականի և այլոց դիմանկար-բնութագրականները: Տե՛ս **Շտիկյան Ս.**, Երեմյան Սիմոն // Հայկական սովետական հանրագիտարան, Երևան, 1977, հատոր 3, էջ 546:

վերտառությամբ «նշանակալի»³ հոգվածը և կոմպոզիտորի լուսանկարը:

Խորհրդանշական էր վերնագրի ընտրությունը: Հայտնի է, որ դեռևս իր կյանքի օրոք Տ.Չուխաճյանին իտալացիները համեմատել են Վերդիի հետ՝ անվանելով նրան «Հայկական Վերդի»⁴: Հայտնի է նաև, որ մահվան մահճում կոմպոզիտորն իր սնարի մոտ հերթապահող Սմբատ Քեսեճյանից խնդրել էր Զ.Վերդիի «Օթելլո» երաժշտական դրամայի պարտիտուրը, գրկել այն, սեղմել կրծքին ու հրաժեշտ տվել երկրային կյանքին:

«Մինչդեռ բնութեան քաղցրաբոյր եւ քաղցրանուագ նոր սերունդը կը պատրաստուէր՝ ծմբան տխուր վարագոյրը պատառելով՝ գալ զարդարել զարնան զուարթութիւնը, եւ երբ բնութեան նորածին ու երիտասարդ երաժիշտը լանջերնին ուռած դայլալիկնին կը հնչեցնէին,-գրում է մահախոսականի հեղինակը,- Չուխաճեանի թշուառ հոգին կը յուզուէր, կը հիծէր Զմիռնիոյ մթնոլորտին տակ, տխուր մահճին մէջ. այն հոգին՝ որ կը յուսար իւր թրթռուն ձայնով ու մատուրներով՝ հետեւիլ բնութեան երաժշտաց սրբենի ճլուղտուկներուն. այն հոգին, որ 55 տարիներէ ի վեր Պոլսոյ սալոններուն եւ թատերաբեմերու մէջ իբր Հայ Վերտի կը ծափահարուէր. այն հոգին՝ որուն վառվռուն երեւակայութեան գեղեցիկ արտադրութիւններն ի Փարիզ, յԵգիպտոս եւ յԱթէնս համակրելի ընդունելութիւն գտած էին: Չուխաճեան կը պատրաստուէր վերահաս ամբան հետ տեսնել նաեւ իր կործանուած առողջութեան ամառն ալ, բայց անաչառ քաղցկեղը կը ճնշէր նորա մարմինը, եւ նուագելի հոգին թեւ առնելով՝ կը սաւառնէր»⁵:

Այնուհետև մխիթարյան հայրը նկատում է, որ այդ կորուստը մեծ է, քանի որ Չուխաճյանը «ինքն էր մի միայն և մեծ Հայ երգահանն»⁶:

Ապա հեղինակը մեջբերում է կոմպոզիտորի մահվան կապակցությամբ «Արևելյան մամուլում» տպագրված մահախոսականից, որտեղ մասնավորապես ասվում էր. «Սիրեցինք մենք զինքը, մելամաղձութեան այդ տխրանոյշ զաւակը, զի մե՛րն էր ան, մեր հոգիին ազնուագոյն մասը: Իր արցունքով լացինք, իր ցաւերով տխրեցանք, իր անուրջով երազեցինք ու իր շնչով ոգիացանք: Այդ կեանքը որ մեր ամենուս կեանքն եղաւ, հրեղէն ասուպի նման սահելով աշխարհի հորիզոնէն, իր ետեւ կը թողու անհուն պարապ մը: Արեւելեան երաժշտութիւնը՝ Չուխաճեանի հետ գերեզման կը մտնէ»⁷:

Հոգվածի երկրորդ մասում Հայր Երեմյանը թվարկում է Չուխաճյանի ստեղծագործությունները և իրավացիորեն նկատում, որ «Չուխաճեանն էր՝ թրքական երաժշտութեան զարկ տուողն և յառաջ մղողն»⁸:

³ Թահմիզեան Ն., «Բազմավէպ»ը եւ հայ երաժշտութեան հարցերը (ըստ մեր գիտական երկարամեայ փորձառութեան) // «Բազմավէպ», Վենետիկ, 1996, թիւ 1-4, էջ 177:

⁴ Տե՛ս Պեշկեթաշյան Ն., Թատերական դէմքեր, Անթիլիաս, 1969, էջ 111:

⁵ Հ. Ս. Երեմ., Հայ Վերտին // «Բազմավէպ», Վենետիկ, 1899, փետրուար, հատոր ԾԷ, էջ 81:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում:

իր 2-էջանոց հակիրճ մահախոսականը Հ.Երեմյանն ավարտում է հետևյալ ուշագրավ եզրակացությամբ. «Չուհաճեան մեծ սխալ մը գործեց իր կենաց մէջ, այն է չնետելն ինք զինքն Ռուսահայ թատերգակ բեմին վրայ, ուր միայն կրնար երջանիկ կեանք և դեռ ատելի փայլուն ասպարէզ մը վայելել»⁹:

Իհարկե, Հայր Երեմյանն այդ ժամանակ չէր կարող նույնիսկ գուշակել, որ տարիներ անց նույն արտահայտությունը խիստ արդիական կլինի նաև Կոմիտասի դեպքում:

«Բազմավէպի» հաջորդ անդրադարձը Տ.Չուխաճյանին տեղի ունեցավ ճիշտ տասը տարի անց՝ 1909 թվականի մարտի համարի 136-137 էջերում: Հոդվածի վերնագիրը նույնն էր՝ դարձյալ «Հայ Վերտին (Տիգրան Չուհաճեան)», իսկ հեղինակն էլ կրկին «Բազմավէպի» խմբագիրն էր, այս անգամ՝ Հայր Ներսես Տիրացույանը:

Զարմանալի պատահականություն կամ խիստ տրամաբանական զուգահեռություն պետք է համարել այն փաստը, որ «Բազմավէպի» հենց նույն համարի էջ 143-ում Հայր Ներսես Տիրացույանի հեղինակությամբ տպագրվում է Տ.Չուխաճյանի հեղինակած հայոց առաջին օպերայի՝ «Արշակ Բ»-ի թատերատեսության հեղինակ, թատերական գործիչ, դրամատուրգ, բանաստեղծ, թարգմանիչ, գեղագետ, ուսուցիչ ու գրական քննադատ Թովմաս Թերգյանի (1840-1909) մահախոսականը՝ «Հանգիստ Թովմաս Թերգեանի» վերնագրով¹⁰:

1909-ի սկզբներին Թերգյանը կաթվածահար էր եղել. անդամալույծ էր դարձել մարմնի ձախ կողմը. նա այլևս դատապարտվել էր ցմահ փակված մնալ տանը: Մինչ այդ անողորմ մահը 1903-ին խլել էր Թերգյանի կրտսեր որդուն՝ տասնվեցամյա Արմանին, անհուն վիշտ պատճառելով սգակիր ծնողներին: Թերգյանի հիվանդությանը նախորդել էր աչքերից մեկի կուրությունը, որոշ ժամանակ կորցրել էր խոսելու կարողությունը, բայց փորձառու բժիշկները բարելավել էին վիճակը: «Չէր կրնար,- հիշում է բանաստեղծի որդին՝ Եղուարդ Թերգյանը,- ոչ գրել, ոչ կարդալ. օրիորդ մը կուգար ամէն օր իրեն ընթերցումներ ընել ու մանաւանդ իր բանաստեղծութիւններն օրինակել ձեռագիրներու վրայէն և իրեն կարդալ՝ որպէս զի բերանացի իր դիտողութիւններն ու սրբագրութիւններն ընէր»¹¹:

Անկողնուն գամված՝ բանաստեղծը կարգի է բերում տպված ու անտիպ քերթվածները, հորինում նորերը՝ փափագելով հրատարակել բանաստեղծությունների ժողովածուն, բայց ապարդյուն: Սեփական տկարությանը գումարվում է կնոջ՝ Սաթենիկի ծանր ու ցավատանջ հիվանդությունը: Հիվանդ տիկնոջ տառապանքներն ավելի էին բզկտում Թերգյանի հոգին: Նման պայմաններում 1909-ի փետրվարի 8-ին վախճանվում է բանաստեղծը. երեք ամիս անց ամուսնուն ու վաղամեռիկ զավակին է միանում տիկին Թերգյանը: «Պոլսոյ հայ հասարակութիւնը, իր բոլոր հատուածներով միացած, խորին

⁹ Նույն տեղում, էջ 82:

¹⁰ Հ. Ն. Տ., Հանգիստ Թովմաս Թերգեանի // «Բազմավէպ», Վենետիկ, 1909, մարտ, թիւ 3, էջ 143:

¹¹ Թէրգեան Թ., Բանաստեղծութեանց ամբողջական հաւաքածոյ, հ. Ա, Վենետիկ-Սուրբ Ղազար, 1929, էջ ԻԹ:

յարգանքի ցուցերով պաշարեց վարպետին դագաղը: Յուդարկավորութեան արարողութիւնը տեղի ունեցաւ Փերայի Ա.Յովհան Ոսկեբերան եկեղեցւոյն մէջ, նախագահութեամբ Սեբաստիոյ առաջնորդ Տ.Լեւոն Քէչեճեան եպիսկոպոսի, ներկայութեամբ Պոլսոյ հայ հասարակութեան ընտրանիին. դասին մէջ կեցած էին իբր սգակիր՝ երկու Հայ վարդապետներ զոր Հայոց Պատրիարքարանի կողմէ դրկած էր Իզմիրլեան սրբազանը, և Մխիթարեան Միաբանութեան կողմէ՝ Հ.Յուսիկ Մեհրապեան, Հ. Եսայի Տայեցի և Հ.Սահակ Տէր-Մովսէսեան: Այս վերջինն արտասանեց դամբանականը: Յետոյ, տարին զինքը հանգչեցնել Շիշլիի գերեզմանատունը, Պեշիկթաշլեանի, Հեքիմեանի, Աղամեանի մօտիկ...»¹²:

«Հայ Վերտին (Տիգրան Չուխաճեան)» հրապարակման մէջ Հայր Ներսեսը հայերեն թարգմանությամբ ներկայացնում է Բոլոնիայի թերթերից մեկի՝ 1909-ի փետրվարի 21-ի համարում հրապարակված՝ Բատուայի համալսարանի ուսանող, հայասեր իտալացի կոմս Riccardo della Torre-ի «Il Verdi Armeno» հոդվածը, որի նպատակի մասին հեղինակը գրում է. «Սակաւաթիւ են այն իտալացիք որ ճանչցած ըլլան սոյն հանճարը, և մենք զայն մեր ազգիս հո՛ս մի քանի խօսքով ճանչցնելնուս միջոց կը զգանք որ անօգուտ պիտի չդատուի մեր ճիգը, քանի որ Մեծ Արիեստագէտի յիշատակն է որ կ'ուզենք պատուել»¹³:

«Հայաստան արևելքի այն երկիրն է,- շարունակում է երիտասարդ կոմսը,- որ իր խանձարութիւն մէջն իսկ ծաղկեալ պահեց հայրենաւանդ քաղաքակրթութեան ամբողջութիւնը՝ անսասան մնալով կեանքի ամենադժնդակ պայքարի մէջ՝ որ ցարդ կը մղէ զինքը շրջապատող ամէն տարրերու դէմ, մանաւանդ թէ հայ միտքը մշտատն հալածանքներու մէջ բեղմնավոր և կորովի կը հանդիսանայ: Հանճարը գիտէ բարձրանալ մարդկային արգելքներէն վեր ու անսանձ ճախրել միջոցին մէջ՝ լուսոյ անսպառելի ճառագայթներ ցոլացնելով ամէն կողմ: Եվ իրաւամբ պատուաբեր հանճարը կը սփոփէ ճնշուած ազգի մը վշտացեալ սիրտը:

Տիգրան Չուխաճեան՝ Հայ Վերտին այդպիսի հանճարներէն մին եղաւ: Ինքը ներդաշնակ մեղեդիներու երկնային խմբագիրը, վարպետ արիեստագէտը՝ իր յաղթանակներովն պատուեց այժմեան քաղաքակրթութիւնը և դեռ աւելի իւր Հայրենիքը»¹⁴:

Հոդվածի յուրաքանչյուր տողում զգացվում է երիտասարդ իտալացու հիացումը Չուխաճյանի հանճարով. «Չուխաճեան վարպետն իր քնարին թրթռացումներուն նրբութեամբ և ախորժալուր ներդաշնակութեամբը՝ այնքան դիպած է իր ունկնդիրները՝ որ ամէնն ալ համակրանքի զգացումներ և միշտ թարմ յիշատակ կը պահեն իւր մասին: Իսկ անոնք որ երաժշտութեան ազնիւ ու վսեմ արիեստին ճաշակն ունին, երբ լսեն Չուխաճեանի կտորները

¹² Նույն տեղում, էջ ԻԹ-Լ:

¹³ Հ. Ներսէս Տ., Հայ Վերտին (Տիգրան Չուխաճեան) // «Բազմավեպ», Վենետիկ, 1909, մարտ, թիւ 3, էջ 136:

¹⁴ Նույն տեղում:

զմայլանքի և յարգանքի խոր զգացում մը պիտի տաժեն անմահ երգահանի շիրմի առջև»¹⁵:

Հոգվածի հեղինակն իրավացիորեն նկատում է նաև, որ Չուխաճյանը «...բոլոր անձամբ երգի արհեստին նուիրած էր իր անձը, որ բնական հանճարով մ'ալ օժտուած ըլլալով՝ նոր տեսակ երաժշտութեան հիմնադիրը, վարպետ մեկնիչը ու ղեկավարը հանդիսացաւ: Ինքն արեւելեան ազգերու մեղեդիները ի մի ձուլելով՝ նոր դպրոցի մը ստեղծողը եղաւ, եւ Վոսփորի բանաստեղծական երկնքին տակ երազուած ամէն ներդաշնակութիւնները իր քնարէն լսուեցան»¹⁶:

Հավարտ հոգվածի՝ հեղինակը խոսում է կոմպոզիտորի մարդկային նկարագրի որոշ գծերի մասին. «Իր քաղցրահամբոյր բնատրութեամբ արհեստակիցներուն, իր խումբերուն անդամներուն յարգելի ու սիրելի էր: Բնաւ դրամ դիզելու տենչանքէն չբռնուեցաւ, ճշմարիտ արդիստի կեանք մը անցուց, մսխելէ աւելի՝ առատաձեռն և ողորմած գտնուելով ստակը կը պակսէր քսակէն: Ծերութեան և հիւանդութեան միջոց քաշուելով Իզմիր՝ անմխիթար անցուց վերջին օրերը յետին աստիճանի չքաւորութեան մէջ, և եթէ Ս.Քէսէճեան աշակերտը փառաւոր յուղարկաւորութիւն կազմակերպելու ամէն ջանք չթափէր, 1898ի Մեծ Վախճանեալը՝ գոեհիկ մարդու թաղումն պիտի ունենար: Այն Չուխաճեանը՝ որ մահուան անկողնէն իսկ երաժշտութիւնը կը ներբողէր՝ և ձեռաց մէջ վերջին հեղինակութեան կտորը բռնած՝ արտասուաց հովիտէն նուագներու աշխարհը կ'անցներ»¹⁷:

Շարունակելով իտալացի կոմսի միտքը՝ Հայր Ներսեսը հավելում է, որ եթե Չուխաճյանի սան Սմբատ Քեսեճյանը կազմակերպեց իր ուսուցչի փառավոր հուղարկավորությունը, ապա մյուս սանը՝ ջութակահար, դաշնակահար, երգեհոնահար, կոմպոզիտոր, դիրիժոր, երաժշտական-հասարակական գործիչ Հարություն Գրիգորի Սինանյանը (1872-1939) «իր անխոնջ ճիգերովն իւր Մեծ Վարպետին հողակոյտին վրայ կիսանդրի մահարձանը բարձրացուց 1907-ի յունուարին: Ու Մանգումէի Էֆքեար լրագրի մէջ (տես 1907, յուն. 20). Մայէստրոյ Տ.Չուխաճեանի յիշատակին գեղեցիկ ներբողներ հրատարակեց»¹⁸:

Եվ իսկապես, Հայր Ներսեսը քաջաձանոթ էր Հարություն Սինանյանի գործունեությանը: Նկատենք, որ «Գեղունի»՝ 1904թ. տարեկան միացյալ համարի 72-73 էջերում լույս էր տեսել Հ.Ն.Տիրացույանի «Յ.Սինանեան երաժիշտ եւ իւր խումբը» վերտառությամբ հոդվածը¹⁹, որտեղ կարդում ենք. «Գեղունիի ընթերցողներուն կը ներկայացնենք այնպիսի հայ անուան պատուաբեր անհատ մը, յանձին Յ.Սինանեան երաժշտին»²⁰: Հեղինակը շարու-

¹⁵ Նույն տեղում, էջ 136, 137:

¹⁶ Տե՛ս **Ասատրեան Ա.**, Էջեր հայ-իտալական երաժշտական առնչութիւնների պատմութիւնից // «Բազմավէպ», Վենետիկ, 2005, թիւ 1-4, էջ 46:

¹⁷ **Հ. Ներսէս Տ.**, Հայ Վերտին (Տիգրան Չուխաճեան), էջ 137:

¹⁸ Նույն տեղում, էջ 136, 137:

¹⁹ Տե՛ս **Հ. Ն. Տիրացուեան**, Յ.Սինանեան երաժիշտ եւ իւր խումբը // «Գեղունի», Վենետիկ, 1904, էջ 72, 73:

²⁰ Նույն տեղում, էջ 72:

նակում է. «Իսկ մենք՝ ներկա տարույս Բազմավեպի Փետրուար թերթին և Յուլիսի 336 էջին մէջ՝ իր կենաց և գործերու գլխաւոր գիծերը դուրս ցատկեցուցած ըլլալով՝ այժմ կը գոհանանք նկատողութեան առնուլ իր արժանիքը իբր հայ երաժիշտ, իբր հեղինակ զանազան կտորներու և մանաւանդ իբր երգիչ Մխիթարեան Քայլերգի և այլն»²¹:

«Բազմավեպի» 1904 թվականի փետրվարյան համարում տպագրված «Յարութին Սինանեան» ծավալուն հոդվածում Հայր Ներսէսն անդրադառնում է Տիգրան Չուխաճյանին ևս: Այսպես. «Կ'ըսուի թէ հանճարները իրարու կը նախանձին և զիրար նսեմացնել կը ճգնին: Մենք այս բանս չենք տեսներ ընդ մէջ Չուխաճեանի և Սինանեանի: Չուխաճեան կը գնահատէր ու կը սիրէր համակրելի և տաղանդաւոր պատանին: Եվ սա կը յարգէր ու կը մեծարէր հայութեան անզուգական երաժշտապետ և երգահան Չուխաճեանը»²², - գրում է հեղինակը և բերում դա հաստատող մի շարք դրվագներ:

Հոդվածում հեղինակը կարևոր տեղեկություններ է հաղորդում այն մասին, որ Տ.Չուխաճյանի մահից հետո հենց Հարություն Սինանյանը «Արշակ Բ» օպերայի Նախերգանքը վերածեց կլավիրի և սեփական միջոցներով տպագրեց 700 օրինակ, որի վաճառքից ստացված հասույթով էլ 1907-ին Իգմիրի գերեզմանատանը Չուխաճյանի շիրմին կանգնեցվեց մեծ վարպետի մահարձանը:

1909 թվականին ընդհատվում է բազմավեպյան չուխաճյանապատումը:

Այսպիսով, Տիգրան Չուխաճյանի ստեղծագործական կյանքը լուսաբանող հոդվածներով «Բազմավեպը» իր ուրույն ու կարևոր նպաստն է բերել երաժշտական չուխաճյանագիտության զարգացմանը՝ պահպանելով և սերունդներին փոխանցելով կոմպոզիտորի կյանքի և գործունեության վերաբերյալ կարևոր տեղեկություններ ու փաստեր:

ТИГРАН ЧУХАДЖЯН НА СТРАНИЦАХ ЖУРНАЛА “БАЗМАВЕП”

АННА АСАТРЯН

В армянской периодической печати первые публикации о выдающемся армянском композиторе, основателе армянского музыкального театра, пианисте, дирижере, педагоге, музыкально-общественном деятеле Тигране Чухаджяне (1837-1898) появились еще при жизни композитора – в 1870-х годах. Но как это ни странно, “Базмавеп” – официальный орган Конгрегации армянских монахов-мхитаристов в Венеции, обратился к жизни и творчеству Т.Чухаджяна лишь после его смерти. В февральском номере 1899 года был опубликован некролог композитора – статья редактора “Базмавеп”-а Симона Еремяна “Армянский Верди”. Спустя 10 лет, в мартовском номере 1909 года, появилась статья редактора “Базмавеп”-а Нерсеса Тирацуяна “Армянский

²¹ Նույն տեղում:

²² Հ. Ներսէս Տիրացունեան, Յարութին Սինանեան // «Բազմավեպ», Վենետիկ, 1904, փետրուար, թիւ 2, էջ 73:

Верди (Тигран Чухаджян)”, которая является переводом статьи “Il Verdi Armeno” итальянского графа Riccardo della Torre, опубликованной в одной из болонских газет от 21 февраля 1909 года.

Ключевые слова – Тигран Чухаджян, “Базмавеп”, “Армянский Верди”, Симон Еремян, “Армянский Верди (Тигран Чухаджян)”, Нерсес Тирацунян, “Il Verdi Armeno”, итальянский граф Riccardo della Torre.

DIKRAN TCHOUHADJIAN ON THE PAGES OF “BAZMAVEP” JOURNAL

ANNA ASATRYAN

In Armenian periodical press the first publications about the outstanding Armenian composer, the founder of Armenian musical theatre, a pianist, a conductor, a pedagogue and a music-public figure Dikran Tchouhadjian (1837-1898) appeared during the composer’s life – in the 1870s. But curiously “Bazmavep” – the official organ of The Congregation of Armenian monks-Mekhitarists in Venice, turned to D. Tchouhadjian’s oeuvre only after his death. In the February 1899 issue was published the composer’s obituary – the article by the editor of “Bazmavep” Simon Yeremyan entitled “Armenian Verdi”. 10 years later in the March 1909 issue, appeared the article “Armenian Verdi (Dikran Tchouhadjian)” by the editor of “Bazmavep” Nerses Tiratsuyan, which is the translation of Italian count Riccardo della Torre’s article “Il Verdi Armeno”, published in one of Bologna newspapers on 21 February 1909.

Key words – Dikran Tchouhadjian, “Bazmavep”, “Armenian Verdi”, Simon Yeremyan, “Armenian Verdi (Dikran Tchouhadjian)”, Nerses Tiratsuyan, “Il Verdi Armeno”, Italian count Riccardo della Torre.